ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքաշինական եւ տարածական պլանավորման ոլորտում ՀՀ համայնքներին տեխնիկական խորհրդատվության եւ օժանդակության տրամադրման մասնագիտական աջակցության

8. Դասախոսություն 8

Սուբվենցիոն ծրագրերի փաթեթների լրակազմություն

1. Ընդհանուր դրույթներ

Սույնով տրվում է սուբվենցիոն շինարարական ծրագրերի իրականացման համար մշակվող նախագծային փաստաթղթերի ամբողջական փաթեթի կազմին և բովանդակությանը ներկայացող պահանջները:

2. Նորմատիվ կարգավորման շրջանակ

- ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1708-Ն որոշում,
- ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշում
- ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները հաստատելու մասին» N128-Ն հրաման,
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի «ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու մասին» N04-Ն հրաման,
- ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի«Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» N 711-Ն որոշում,

8. Դասախոսություն 8
Սուբվենցիոն ծրագրերի փաթեթների լրակազմություն

- ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.04.2009թ «Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածուն հաստատելու մասին» N 35-Ն հրաման
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի փետրվարի 15-ի «Քաղաքաշինական փաստաթղթերի (ծրագրային և ճարտարապետաշինարարական) մշակման աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը հաստատելու մասին» N 19-Ն հրաման
- ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N879-Ն որոշմամբ հաստատված <Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգ>-ը
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 1998 թվականի սեպտեմբերի 28-ի «Շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության իրականացման հրահանգը հաստատելու մասին» N 143 հրաման
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 1998 թվականի ապրիլի 28-ի ««Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը հաստատելու մասին» N 44 հրաման,
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» N 1920-Ն որոշում:

8. Դասախոսություն 8

Սուբվենցիոն ծրագրերի փաթեթների լրակազմություն

3.Ելակետային տվյալներ

ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1708-Ն որոշման հավելված 2-ի 12-րդ կետի համաձայն՝ Սուբվենցիայի ամբողջական փաթեթը ներառում է. ՝

- շինարարական ծրագրերի դեպքում նախագծանախահաշվային փաստաթղթերի լրակազմ փաթեթը, այդ թվում՝ նախագծի ելակետային տվյալները՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը, տեխնիկական պայմանները, տարածքի ինժեներաերկրաբանական հետազննության և գոյություն ունեցող շենքերի և շինությունների փաստացի տեխնիկական վիճակի հետազննության եզրակացությունները, ինչպես նաև նախագծի, այդ թվում՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի վերաբերյալ տրված փորձաքննության դրական եզրակացությունը, շահագրգիռ մարմինների համաձայնեցումները և (կամ) «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան կազմակերպված մրցակցային ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրերը.

8. Դասախոսություն 8

Սուբվենցիոն ծրագրերի փաթեթների լրակազմություն

Շինարարական օբյեկտի նախագծման համար պետք է նախագծային կազմակերպությանը (նախագծողին) տրամադրել նախագծման համար անհրաժեշտ ելակետային տվյալները:

Ելակետային տվյալների հիմնական բաղադրիչներն են.

- ✓ Քաղաքաշինական պայմաններ և սահմանափակումներ;
- ✓ Տեխնիկական բնութագիր կամ առաջադրանք՝ շինարարական օբյեկտի նախագծային փաստաթղթերի մշակման;
- ✓ Ճարտարապետահատագծային առաջադրանք (ներառյալ՝ մատակարար կազմակերպությունների տեխնիկական պայմաններ):

8. Դասախոսություն 8

Սուբվենցիոն ծրագրերի փաթեթների լրակազմություն

- Քաղաքաշինական պայմաններն ու սահմանափակումները տրամադրվում են քաղաքաշինության և ճարտարապետության համապատասխան լիազոր տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ տեղական մակարդակով տարածական պլանավորման փաստաթղթերի հիման վրա:՝
- Շինարարական օբյեկտների նախագծային փաստաթղթերի մշակման տեխնիկական բնութագիրը կազմվում է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ձևաչափին համապատասխան, հիմք ընդունելով շինարարական նորմերի պահանջները , որը հաստատվում է պատվիրատուի կողմից:
- Անհրաժեշտության դեպքում, միջանկյալ համաձայնեցումներ պահանջող նախագծային բնութագրերը ներկայացվում են շահագրգիռ մարմինների համաձայնեցմանը:
- Նախագծային առաջադրանքը սահմանում է պատվիրատուի հիմնավորված պահանջները շինարարական օբյեկտի ծավալահատակագծային, ճարտարապետական, ինժեներական և տեխնոլոգիական լուծումների, դրա հիմնական բնութագրերի, կառուցման ծախսերի և նախատեսման վերաբերյալ և կազմվում է հաշվի առնելով՝ տեխնիկական պայմանները, քաղաքաշինական պայմանները: և սահմանափակումներ (ընդ որում՝ հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար մատչելիության, էներգաարդյունավետության ապահովման, բնակչության քաղաքացիական պաշտպանության պահանջները, առաջադրանքում նշվում է առանձին կետերով):

8. Դասախոսություն 8
Սուբվենցիոն ծրագրերի փաթեթների լրակազմություն

- Նախագծային առաջադրանքում կարող են սահմանվել տեղական և ներմուծվող նյութերի, արտադրանքի, կառուցվածքների և սարքավորումների օգտագործման հիմնավորման պահանջներ (համապատասխան տեղական նյութատեխնիկական ռեսուրսների տեխնիկական և գնային բնութագրերի համեմատությամբ),
- Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամրակայումը, նորոգումը և վերականգնումն իրականացվում են ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշմամբ սահմանված կարգի համաձայն՝ հուշարձանների պետական հաշվառման (Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված), պահպանության, հնագիտական ուսումնասիրման, ամրակայման, վերականգնման և օգտագործման բնագավառներում գերատեսչական նորմատիվ ակտերը սահմանված կարգով ընդունում է պատմության ու մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի պետական լիազորված մարմինը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

8. Դասախոսություն 8
Սուբվենցիոն ծրագրերի փաթեթների լրակազմություն

- Շինարարական օբյեկտների կառուցման նախնական (մոտավոր) մոտավոր արժեքը որոշվում է ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.04.2009թ «Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածուն հաստատելու մասին» N 35-Ն հրամանի համաձայն:
- Ընդ որում, շինարարական օբյեկտների կառուցման խոշորացված ծախսերը ենթակա են հստակեցման սահմանված կարգով մշակված նախագծանախահաշվային փաստաթղթերի շրջանակներում:

4. Նախագծային փաստթղթերի մշակում

1. Շինարարական օբյեկտների նախագծային փաստաթղթերի մշակման համար կատարվում է Նախագծողի ընտրություն, որն իրականացվում է Պետական գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան:
2. Շինարարական օբյեկտի նշանակությունը, քաղաքաշինական գործունեության տեսակը (նոր կառուցում, վերակառուցում, հիմնանորոգում, վերականգնում և այլն), կառուցման վայրը , ըստ նախագծային փաստաթղթերի, պետք է համապատասխանի նախագծային առաջադրանքին, չփոխվի նախագծման և շինարարության տարբեր փուլերում տեսակը:

- Շինարարական օբյեկտի կառուցման նախագծային փաստաթղթերը մշակվում են՝ հաշվի առնելով քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջները, ելակետային տվյալները և համապատասխանությունը օրենսդրությանը, աշխատանքի պաշտպանության և անվտանգության պահանջներին՝ ներառյալ հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար մատչելիության պահանջները: (հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար մատչելիություն ստեղծելու լուծումները նախագծային փաստաթղթերում մշակվում են առանձին բաժնում):

8. Դասախոսություն 8
Սուբվենցիոն ծրագրերի փաթեթների լրակազմություն

- ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման համաձայն՝ շինարարության օբյեկտները, ելնելով դրանց ծավալից, նշանակությունից, կարևորությունից ու բարդությունից, ինչպես նաև մարդկանց և շրջակա միջավայրի անվտանգությունից, ըստ ռիսկայնության աստիճանի դասակարգվում են հինգ կատեգորիաների:
- Շինարարության օբյեկտների նախագծային փաստաթղթերը, կախված դրանց կատեգորիայից կարող են մշակվել մեկ՝ «Աշխատանքային նախագիծ», կամ երկու՝ «Նախագիծ» և «Աշխատանքային փաստաթղթեր» փուլերով, ընդ որում՝ մեկ փուլով մշակվում են II և III կատեգորիաների դասակարգում ունեցող օբյեկտների նախագծային փաստաթղթերը, բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և սերտիֆիկացված նախագծերի տեղակապման նախագծերը, իսկ երկու փուլով՝ IV և V կատեգորիաների օբյեկտների նախագծային փաստաթղթերը:
- IV և V կատեգորիաների դասակարգում ունեցող օբյեկտների ու համալիրների առաջադրանքները կարող են լրամշակվել միջանկյալ համաձայնեցում ստացած՝ սահմանված կարգով մշակված էսքիզային նախագծի հիման վրա, եթե նման պայման ամրագրված է առաջադրանքում:
- Շինարարական օբյեկտների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը նախագծման տարբեր փուլերում որոշվում են շինարարական նորմերին համապատասխան և պետք է բավարար լինեն նախագծային որոշումների գնահատման և դրանց իրականացման համար:
- Պատվիրատուն և նախագծողը կարող են հիմնավորված, համաձայնեցված որոշում կայացնել փուլերի քանակի և նախագծային փուլային փոփոխության վերաբերյալ:

8. Դասախոսություն 8
Սուբվենցիոն ծրագրերի փաթեթների լրակազմություն

- Շինարարության տեւողությունը որոշվում է նախագծի շինարարական արտադրության կազմակերպման բաժնում, տեխնիկատնտեսական հիմնավորմամբ շինարարության փուլերը մշակելիս՝ հաշվի առնելով շինարարության տեսակը, կառուցվածքի բարդությունը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, շինարարական, աշխատանքային և տեխնիկական ռեսուրսների շրջանակը:
- Շինարարական արտադրության կազմակերպման նախագիծը մշակվում է նաև շինհրապարակի համար՝ որպես ամբողջություն:
- Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության հիմնական նպատակը ընտրված նախագծային լուծումների համապատասխանության ապահովումն է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:
- Ինժեներատեխնիկական, տեխնիկատնտեսական, բնապահպանական և այլ հաշվարկները, ինժեներական որոնումների և հետազոտությունների, նմանատիպ նախագծերի նյութերը, որոնք չեն ներառվել նախագծային փաստաթղթերում, ըստ պահանջի տրամադրվում են պատվիրատուին և շինարարկան փարձաքննություն իրականացնող կազմակերպությանը, որը օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է շինարարական նախագծերի փորձաքննություն:

Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննությունն անցկացվում է պատվիրատուի և փորձագիտական մարմնի միջև կնքված պայմանագրի հիման վրա:

Ելնելով քաղաքաշինական փաստաթղթերի նշանակությունից, ինչպես նաև դրանցով իրականացվող քաղաքաշինական օբյեկտների բարդությունից՝ իրականացվում են փորձաքննության հետևյալ տեսակները՝

1) **հատուկ համալիր փորձաքննություն.**
2) **համալիր փորձաքննություն.**
3) **պարզ փորձաքննություն:**

5. Շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության իրականացումը

- Պատվիրատուն և գլխավոր նախագծողը (նախագծողը) պայմանագրի պայմաններով որոշում են հեղինակային հսկողության կատարողին, ով իրականացնում է հեղինակային հսկողությունը՝ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքների, ՀՀ քաղաքաշինության նախարարության 1998 թվականի սեպտեմբերի 28-ի N 143 հրամանով հաստատված «Շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության իրականացման հրահանգով» ու այլ օրենսդրական, նորմատիվ իրավական և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

6. Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացումը

- Շինարարական աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության ծառայությունը ձեռք է բերվում պատվիրատուների կողմից՝ մրցութային կարգով, համապատասխան պայմանագրերի կնքմամբ: Որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման նկատմամբ հսկողական գործառույթ վերապահված է նաև տեսչական մարմիններին:
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 1998 թվականի ապրիլի 28-ի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» N44 հրամանի համաձայն՝ շինարարության տեխնիկական հսկողություն չիրականացնելու կամ անորակ իրականացնելու համար տեխնիկական հսկողություն իրականացնող լիցենզավորված մասնագիտացված կազմակերպությունները և մասնագետները կրում են պատասխանատվություն՝ գործող օրենսդրությանը համապատասխան:

Կարևոր է՝

- Շինարարության օբյեկտի նախագծային փաստաթղթերի ամբողջական փաթեթը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՈՒՆ